ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԼԱՅՆԼԻ ԿՈԼՍԹԸՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ԼԱՅՆԼԻ ԿՈԼՍԹԸՆ, ՈՐ Ի ՆԻՒ-ԵՈՐՔ, ԱՄՆ

Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանից ուրախութեամբ տեղեկացանք, որ Դուք երկար տարիներ անդամակցելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Ս. Գէորգ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիների ծխական խորհուրդներին ու Առաջնորդարանի տարբեր յանձնախմբերին, Ձեր անսակարկ եւ օգտաշատ ծառայութիւնն էք բերում Տիրախնամ թեմին եւ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցուն:

Ձեր անկեղծ նուիրումի եւ երախտարժան վաստակի բարձր գնահատանքով Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ, ընդառաջելով բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Մեր Կոնդակով շնորհում ենք Ձեզ Մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ, Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով քաջալեր, Դուք առաւել խանդավառութեամբ եւ առաւել կորովաշատութեամբ պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն:

Այս ուրախ առիթով Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով

բաջառողջ երկար կեանք, լիապրումն երջանկութիւն եւ գործոց մշտաւորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ն Փետրուարի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԼԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 2